# Ավետիք Իսահակյան

## Նոր Տարու գիշերը

Գիշերվա կեսին զանգակատնից
Հնչեց նոր տարվա ժամը ցնծալից:
Անցավ հին տարին, անցել է ինչպես
Մի հավերժություն մինչև այս րոպես,
Մի հավերժություն անհուն, անսահման,
Որ չքացել է ոչընչի նման:

Եվ բեռնավորված հույսով ու վախով՝
Մեռավ հին տարին իր հետ թաղելով
Ապարանքները իմ երազանքի,
Որ շինել էի միշտ ժամանակի
Քանդվող ծովափին…

Եվ ի՞նչ կա այսօր,
Կանգնել եմ մենակ և ուղեմոլոր՝
Ու միտք եմ անում – չրքացավ անդարձ
Հրճվանքը կյանքիս, և՛ վիշտը մնաց
Սրտիս հատակում, ինչպես սև մրրուր…

Կանգնել եմ հիմա անհույս և թափուր՝
Աչքերըս սուզած խավար անհայտում
Գալիք օրերի, - ականջ եմ դրնում
Զանգակատնից խորին գիշերին

Նոր տարվա ժամի հընչող զարկերին,
Որ ինչպես սրրի հարվածներ բեկ-բեկ
Կտրում են կյանքիս թելերը մեկ-մեկ…

1920
Ժընև